

Հայաստան

Մարդկային կապիտալի համաթիվ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱԹԻՎԸ (ՄԿՀ) ԵՎ ՂԲԱ ԲԱՂԱՊԻՉՆԵՐԸ
 ՄԿՀ-ով գնահատվում է մարդկային կապիտալի մեծությունը, որին այսօր ծնված երեխան կարող է ակնկալել, որ կհասնի մինչև 18 տարեկանը: Այն հաջորդ սերնդի աշխատողների արտադրողականության արտահայտումն է՝ ամբողջական կրթության և լիարժեք առողջության հենանիշի համեմատ: Այն կազմվում է 157 երկրի համար:

Բաղկացած է հինգ ցուցանիշից՝ մինչև հինգ տարեկանն ապրելու հավանականությունը, երեխայի ուսման սպասվող տարիները, հարմոնիզացված թեստերի միավորները՝ որպես ուսումնառության որակի չափանիշ, չափահասների ապրելիության ցուցանիշը (15 տարեկանների այն մասը, որը կապրի մինչև 60 տարեկանը) և երեխաների այն մասը, որը թերաճ չէ:

Աշխարհի մասշտաբով՝ այսօր ծնված բոլոր երեխաների 56 տոկոսը մեծանալով լավագույն դեպքում իր կարողության կեսի չափով արտադրողական կլինի: 92 տոկոսը մեծանալով լավագույն դեպքում իր կարողության 75 տոկոսի չափով արտադրողական կլինի:


ԻՆՉՊԻՄՐՆ Է ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- **Մարդկային կապիտալի համաթիվ:** Հայաստանում այսօր ծնված երեխան, երբ մեծանա, **57 տոկոսով** այնչափ արտադրողական կլինի, որչափ կարող էր լինել ամբողջական կրթություն ստանալու և լիարժեք առողջ լինելու դեպքում:
- **Մինչև հինգ տարեկանն ապրելու հավանականությունը:** Հայաստանում ծնված 100 երեխայից **99-ը** մինչև հինգ տարեկանն ապրում է:
- **Ուսման սպասվող տարիները:** Հայաստանում, 4 տարեկանից ուսումն սկսող երեխան մինչև 18 տարին լրանալը կարելի է ակնկալել, որ ավարտած կլինի ուսման 11.1 տարին:
- **Հարմոնիզացված թեստերի միավորները:** Հայաստանի աշակերտները **443** միավոր են ստանում ըստ սանդղակի, որտեղ 625-ը ներկայացնում է բարձր առաջադիմությունը և 300 միավորը՝ նվազագույնը:
- **Ուսումնառությամբ ճշգրտված ուսման տարիները:** Իրականում երեխաների սովորածը որպես գործոն ներառելու դեպքում ուսման սպասվող տարիները կազմում են ընդամենը **7.9 տարի:**
- **Չափահասների ապրելիության ցուցանիշը:** Ողջ Հայաստանի 15 տարեկանների **88 տոկոսը** կապրի մինչև 60 տարեկանը: Այս վիճակագրությունն առողջության համար մահացու և ոչ մահացու ելքով արդյունքների շարքը փոխարինող փոփոխական է, որին այսօր ծնված երեխան որպես չափահաս կառերեսվի ներկա պայմաններում:
- **Առողջ աճ (ոչ թերաճի ցուցանիշ):** 100 երեխայից **91-ը** թերաճ չէ: 100 երեխայից **9-ը** թերաճ է և այդպիսով վտանգված է ճանաչողական և ֆիզիկական սահմանափակումներով, որոնք կարող են շարունակվել ողջ կյանքի ընթացքում:

ՍԵՌՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՄԿՀ՝ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՎՆՆ

Հայաստանում աղջիկների ՄԿՀ-ն բարձր է տղաների ՄԿՀ-ից: Աղյուսակ 1-ը ցույց է տալիս ՄԿՀ բաղադրիչներից յուրաքանչյուրի բաշխումն ըստ սեռերի:

Գծապատկեր 1. ՄԿՀ և բաղադրիչները



Ծանոթագրություն.

- Մեծ շրջանը ներկայացնում է Հայաստանը:
- Փոքր շրջաններն այլ երկրներն են ներկայացնում:
- Թավ, ուղղահայաց գծերը և շրջանների գույնն արտացոլում է բաշխվածության կվարտիլները:


Աղյուսակ 1. ՄԿՀ-ն ըստ սեռերի

Բաղադրիչ	Տղաներ	Աղջիկներ	Շեղանակ
ՄԿՀ	0.55	0.59	0.57
Ապրելիությունը մինչև 5 տարեկան	0.99	0.99	0.99
Ուսման սպասվող տարիները	10.9	11.3	11.1
Հարմոնիզացված թեստերի միավորները	439	448	443
Ուսումնառությամբ ճշգրտված ուսման տարիները	7.7	8.1	7.9
Չափահասների ապրելիության ցուցանիշը	0.83	0.93	0.88
Ոչ թերաճի ցուցանիշը	0.89	0.92	0.91

Ծանոթագրություն

- Եթե նշվում է գծիկ, ուրեմն տվյալները մատչելի չեն:
- Բոլոր թվերը կլորացված են:
- Ըստ սեռերի առանձնացված ՄԿՀ հաշվարկվում է՝ կիրառելով միայն չափահասների ապրելիության ցուցանիշը, եթե ըստ սեռերի տարանջատված թերաճի ցուցանիշները մատչելի չեն:

Գծապատկեր 2. ՄԿՀ հենանշումը




Ծանոթագրություններ.
 - Չնշելու դեպքում բոլոր տվյալները 2017 թ. -ի համար են:
 - Անորոշության ինտերվալները (սև ուղղահայաց գծերը) արտացոլում են համաթվի բաղադրիչների չափման անորոշությունը:

ԻՆՉՊԻՄԻՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՄԵՄՍՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2012-2017 թթ. Հայաստանի ՄԿՀ արժեքը նվազեց՝ 0.58-ից կազմելով 0.57 (գծապատկեր 2):

2017 թ. Հայաստանի ՄԿՀ-ն իր տարածաշրջանի միջին ցուցանիշից ցածր է, սակայն բարձր իր եկամտային խմբի միջինից:


Գծապատկեր 3. Ուսումնառության բացը



ԻՐԱԿԱՆՈՒՄ ԵՐԵՒԱՆԵՐԸ ՈՐՔԱՆ ԵՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՍՈՎՈՐՈՒՄ

Հայաստանում երեխաները կարող են ակնկալել, որ մինչև 18 տարին լրանալը կավարտեն 11.1 տարվա նախակրթական, կրտսեր և միջնակարգ ուսումը: Սակայն ուսման տարիներն ըստ ուսումնառության որակի ճշգրտելու դեպքում, այն ընդամենը համարժեք է 7.9 տարվա. ուսումնառության բացը 3.2 տարի է (գծապատկեր 3):

Գծապատկեր 4. Մարդկային կապիտալի համաթիվը մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի համեմատ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԿՀ-ն ՀԱՄԱՀՈՒՂ Է ԻՐ ԵԿԱՄՍՏՅՈՒՄ ՄԱԿԱՐԱԿԻՑ ՄՊԱՍԿՈՂ ԱՐՊՈՒՆՔԻՆ

2017 թ. Հայաստանի ՄԿՀ-ն իր եկամտային մակարդակից սպասվող ցուցանիշից բարձր էր (գծապատկեր 4):

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԾՐԱԳԻՐ

Մարդկային կապիտալի ծրագիրը հետամուտ է իրագրելի քաղաքական և մարդկային կապիտալի ձևավորման ուղղված միջամտությունների համար պահանջարկի ավելացման նպատակին: Այն նպատակադրում է մարդկանց ուղղված ավելի լավ և ավելի շատ ներդրումների կատարման արագ ընթացքի ապահովումը: Ծրագիրն ունի երեք տարր՝ (i) մարդկային կապիտալի համաթիվը, (ii) մարդկային կապիտալի ուղղությամբ հետազոտությունների և չափման հզորացումը և (iii) երկրներին ուղղված աջակցությունը՝ մարդկային կապիտալի վերջնարդյունքների ուղղությամբ առաջընթացն արագացնելու հարցում:

Մարդկային կապիտալի ծրագրի վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար այցելեք՝ www.worldbank.org/humancapitalproject



#investinPeople